# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2026թ. թիվ 306-Ա

Լ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ 2025-2026ԹԹ. ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄՆԱՑԱԾ ՄԱՍԸ ԵՎ
2026-2027ԹԹ. ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 163-րդ հոդվածների, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշման թիվ 3 հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության» 60-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2025 թվականի մարտի 18-ի թիվ 139-Ա և 2025 թվականի հուլիսի 30-ի թիվ 417-Ա որոշումները, հաշվի առնելով Լ.Ավետիսյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի Ա.Մյասնիկյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Լուսինե Ավետիսյանին տրամադրել 2025-2026թթ. աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մնացած մասը ս/թ մայիսի 12-ից 19-ը ներառյալ՝ 6 աշխատանքային օր և 2026-2027թթ. աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մի մասը ս/թ մայիսի 20-ից 29-ը ներառյալ՝ 7 աշխատանքային օր:

2. Լ.Ավետիսյանի արձակուրդում գտնվելու ժամանակ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի Ա.Մյասնիկյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի Ա.Մյասնիկյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Աննա Թովմասյանին:

3. Լ.Ավետիսյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի հունիսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

Ստորագրող
ԱՐՍԵՆ ՂԱՐԻԲՅԱՆ
2414880046

2026-05-12 18:06:50 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա.ՂԱՐԻԲՅԱՆ

2026թ. մայիսի 12
ք.Վանաձոր